



**BRIDGE for CSOs**

bringing real impact with diaspora global engagement

**Եկե՛ք միասնաբար ողջունենք անխուսափելի ՆՈՐԸ,  
որպեսզի հավերժ մեզ մոտ մնա գրականությունը:**

Հարգելի՛ տնօրեն,

Հայկական բարեգործական ընդհանուր միության «ԶԳ Կամուրջ» ծրագիրը հրավիրում է Ձեզ մասնակցելու «Թեքնոլինգվիստիքս» մշակութային հասարակական կազմակերպության «Վլում» հայկական թվային գրադարան-հարթակի ներկայացմանը և գրականագետ Արքմենիկ Նիկողոսյանին կազմակերպության Բարի կամքի դեսպանի կոչում շնորհելու միջոցառմանը: Հրավերն ուղղված է Երևան քաղաքի դպրոցների տնօրեններին, գրադարանավարներին կամ գրականության մասնագետներին:

«Թեքնոլինգվիստիքս» հասարակական կազմակերպությունը, նպատակ ունենալով կապել գրականությունը տեխնոլոգիայի հետ, ստեղծել է գրական բովանդակությամբ հարուստ մի հարթակ՝ հայ գրականության ձայնային և թվայնացած գրքերով (ebooks & audiobooks), որոնք հասանելի են լայն հասարակությանը հեռախոսների և պնակիտների (tablets) միջոցով:

«ԶԳ Կամուրջ» ծրագիրն իրականացվում է ՀԲԸՄ Հայաստանի և Եվրասիա համագործակցությունն հիմնադրամի կողմից՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ: Այս եռամյա ծրագրի նպատակն է ամրապնդել հայաստանյան քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունները՝ քաղաքացիների կարիքներին ավելի լավ արձագանքելու գործում: Ծրագրի յուրահատուկ բաղադրիչներից է սփյուռքի տաղանդների և փորձառության ներգրավումը:

Միջոցառումը տեղի կունենա **մարտի 19-ին, ժամը 16:00-ին, Թումանյանի տուն-թանգարանում: Խնդրում ենք հաստատել Ձեր մասնակցությունը մինչև մարտի 15-ը, ժ. 16:00՝ գրանցվելով սույն հղումով <http://bit.ly/Technolingustics> :**

Հարցերի դեպքում դիմել «ԶԳ Կամուրջ» ծրագրի կազմակերպչական հարցերով պատասխանատու Նարե Գասպարյանին՝ [nareg@agbu.am](mailto:nareg@agbu.am) կամ զանգել (060)722229 հեռախոսահամարով:

Կից ներկայացնում ենք միջոցառման օրակարգը:

Սիրով ակնկալում ենք Ձեր մասնակցությունը:

Հարգանքով՝

Տաճատ Ստեփանյան  
«ԶԳ Կամուրջ» ծրագրի ղեկավար



Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից



ԶԳ Կամուրջը ծրագրի իրականացվում է ՀԲԸՄ կողմից՝ ԵԶ-ի հետ համագործակցությամբ

Մելիք-Աղամյան 2/2,  
Երևան, 0010 Հայաստան  
Նեո: +37460 72 22 29  
[bridge@agbu.am](mailto:bridge@agbu.am)

